

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

### Ո՞ր եւ Ինչպե՞ս Սխալեցաւ Ատրպէյճանի Նախագահը

Վերջին օրերուն Հայաստան-Ատրպէյճան սահմանին կը տիրէ յարաբերական հանդարտութիւն, որ կը յաջորդէ շաբաթ մը առաջ տեղի ունեցած ռազմական բաւական բուռն գործողութիւններուն, որոնց ընթացքին Հայկական բանակը յաջողեցաւ պատժիչ գործողութիւններ իրականացնել հակառակորդին դէմ՝ հասցնելով անոր մարդկային, դիրքային եւ մեծ թիւով զինատեսակներու կորուստներ:

Վերջին օրերուն ամենէն աւելի բարձրացած հարցերէն մէկը այն է թէ, ինչո՞ւ այս պահուն, եւ ինչո՞ւ Հայաստանի հետ սահմանին եւ ոչ թէ Արցախեան ճակատին ուղղութեամբ եղաւ Պաքուի այս վերջին արկածախնդրութիւնը, որուն համար ան վճարեց բաւական սուղ գին: Բննարկուող բա-

Շար.ը էջ 5

### Փաշինեան. «ՀՀ Զինուած ուժերը Յոյց Տուեցին Բարձր Մարտունակութիւն՝ Նաեւ Զախցախելով Ալիեւի Կառուցած Միջը»

«Հայաստանի զինուած ուժերը ջոյց տուեցին բացառիկ բարձր մակարդակի մարտունակութիւն՝ ոչ միայն ապահովելով Հայաստանի սահմանների անձեռնմխելիութիւնը, այլեւ ջախջախելով մէկուկէս տասնամեակ Ատրպէյճանի գործող նախագահի կողմից կառուցուած միջը՝ ատրպէյճանական բանակի մարտունակութեան մասին», նման յայտարարութեամբ հանդէս եկաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան Պաշտպանութեան նախարարութենէն ներս կազմած խորհրդակցութեան ժամանակ:

Նախարարութեան, Զինուած ուժերու ղեկավար կազմի ու արտաքին գործոց նախարարի մասնակցութեամբ հանդիպման ընթացքին Փաշինեան յայտնեց. - «Վերջին ամիսներին Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի բազմամեայ ռազմական հռետորաբանութիւնը սրուել է, եւ նա աւելի ագրեսիվ կերպով սպառնում էր Ղարաբաղի հարցը լուծել ուժային մեթոդներով՝ բացայայտ կերպով ի ջոյց դնելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համաձայնագրութեան շրջանակներում տեղի ունեցող բանակցային գոր-



Վարչապետ Նիկոլ Փաշինեան Պաշտպանութեան նախարարութենէն ներս կազմած խորհրդակցութեան ժամանակ

ծընթացը վիժեցնելու իր մտադրութիւնը: Այս ֆոնին զարգացում էր Ատրպէյճանի բանակի հզօրութեան ու անպարտելիութեան մասին թեզը՝ փորձ անելով արդարացնել վերջին մէկուկէս տասնամեակում բանակի զարգացման պատրուակով ծախսուած միլիարդաւոր տոլարներն Ատրպէյճանի ժողովրդի բարեկեցութեանը չծառայեց-

նելու գործելակերպը»: Ըստ Փաշինեանի՝ Ատրպէյճանի ռազմաքաղաքական ղեկավարութիւնը շարունակաբար կը յայտարարէր, թէ կը սպասէ Ալիեւի հրամանին՝ Ղարաբաղի հարցը ռազմական ճանապարհով լուծելու համար: «Այս ագրեսիվ յայտարարու-

Շար.ը էջ 5

### Հարիւրաւոր Ցուցարարներու Մասնակցութեամբ Բողոքի Ցոյց Լոս Անճելոսի Մէջ




Լոս Անճելոսահայեր բողոքեն Ատրպէյճանի հիւլապտոսութեան առջեւ

Երկուշաբթի, Յուլիսի 20-ի առաւօտեան, Լոս Անճելոսի Ատրպէյճանի հիւլապտոսարանի շէնքին առջեւ տեղի ունեցաւ բողոքի ջոյց՝ կազմակերպութեամբ խումբ մը համայնքային գործիչներու: Համավարակի պատճառաւ ծրագրուած էր հաւաքին տալ խորհրդանշական բնոյթ, սակայն ներկայութիւնը նախատեսուածէն աւելի մեծ էր եւ մօտ 500 հոգիներ, Հայկական դրօշներով համախմբուած էին հիւլապտոսարանին առջեւ՝ դատապարտելու համար Ատրպէյճանա-թրքական յարձակումը Հայաստանի սահմանի խաղաղ բնա-

կավայրերուն դէմ: Ելոյթ ունեցողները իրենց գորակցութիւնը յայտնեցին հայոց բանակի մեր առի զինուորներուն, Հայաստանի մեր ժողովուրդին ու ղեկավարութեան: Յոյցի ընթացքին կը տիրէր տօնական մթնոլորտ, կը հնչէին ազգային-հայերէնասիրական երգեր ու տեղի կ'ունենար շուրջպար: Ի տարբերութիւն արտասահմանեան այլ քաղաքներուն, նշմարելի էր ատրպէյճանցիներու բացակայութիւնը կամ ջոյցը խանգարելու փորձերը:

### Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան Յայտարարութիւնը Հօգր Սահման, Հօգր Թիկունք

Անցնող հինգ օրերուն, Տաւուշի շրջանի ուղղութեամբ ատրպէյճանական զօրքերուն կողմէ շարունակուող սադրիչ գործողութիւնները եւ շրջանի խաղաղ բնակավայրերուն ռմբակոծումը կու գան անգամ մը եւս ապացուցելու, որ Ատրպէյճանի բռնապետական ռեժիմը չի դադիր արցախեան հակամարտութիւնը զենքի ուժով լուծելու իր խիստ դատապարտելի մտադրութենէն եւ կը շարունակէ մնալ հարցին խաղաղ լուծման գլխաւոր խոչընդոտը: Դատապարտելի կը գտնենք նաեւ Թուրքիոյ բացայայտ կողմնակալ կեցուածքը ներկայ իրավիճակին առնչութեամբ, որ միայն կրնայ նպաստել տարածաշրջանին ա՛լ աւելի ապակայունացման:



Վերջին իրադարձութիւնները եկան վերահաստատելու այն փաստը, որ հայոց քաջարի ու մարտունակ բանակը պատրաստ է ոչ միայն պաշտպանելու հայրենի սահմանները, այլեւ ի պահանջել հարկին ճշգրիտ գործողութիւններով բարելաւել իր մարտական դիրքերը: Կը յուսանք, որ տարիներ շարունակ ռազմատեսչ կոչելով ու պատերազմի սպանալիքով ասպարէզ կը կարդար Հայաստանի եւ Արցախի, վերջին գարգացումներու լոյսին տակ ճիշդ հետեւութիւններ ընէ եւ վերադառնայ բանակցային սեղան:

Այս օրերուն, աւելի քան երբեք, կը կարեւորենք համախմբուածութեան եւ միասնականութեան անհրաժեշտութիւնը՝ դիմադրելու համար ոչ միայն երեւոյց, այլեւ աներեւոյթ թշնամիին, որ տակաւին կը շարունակէ մեծագոյն վտանգը ներկայացնել հայրենիքի բարօրութեան ու ապագային: Առ այդ, կրկին կոչ կ'ուղղենք մեր հայաստանաբնակ եւ արցախաբնակ հայրենակիցներուն՝ հետեւելու «Քորոնա» համաճարակին դէմ կանխարգելիչ կանոններուն, յանուն «Հօգր սահման, հօգր թիկունք» սկզբունքի: Կեցցե՛ հայոց բանակը Բիւր յարգանք զոհուած մարտիկներու յիշատակին Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութիւն Յուլիս 17, 2020

Անցնող հինգ օրերուն, Տաւուշի շրջանի ուղղութեամբ ատրպէյճանական զօրքերուն կողմէ շարունակուող սադրիչ գործողութիւնները եւ շրջանի խաղաղ բնակավայրերուն ռմբակոծումը կու գան անգամ մը եւս ապացուցելու, որ Ատրպէյճանի բռնապետական ռեժիմը չի դադիր արցախեան հակամարտութիւնը զենքի ուժով լուծելու իր խիստ դատապարտելի մտադրութենէն եւ կը շարունակէ մնալ հարցին խաղաղ լուծման գլխաւոր խոչընդոտը: Դատապարտելի կը գտնենք նաեւ Թուրքիոյ բացայայտ կողմնակալ կեցուածքը ներկայ իրավիճակին առնչութեամբ, որ միայն կրնայ նպաստել տարածաշրջանին ա՛լ աւելի ապակայունացման:



ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Զօրացրման Ենթակայ Ծառայողները Կը Պահանջեն Մնալ Սահմանին



Հայկական բանակին մէջ ծառայող խումբ մը զինուորներ

Պաշտպանութեան նախարարութեան խօսնակ՝ Շուշան Ստեփանեան Ֆէյսպուքի իր էջին վրայ գրած է. «Բազմիցս ենք ականատես եղել մեր զինծառայողների հայրենասիրութեան դրսևորումներին: Այսօր էլ մեր տղաները վերստին ապացուցում են իրենց անմնացորդ նուիրումը հայրենիքին եւ ժողովրդին:

3-րդ զօրամիաւորման բոլոր զօրամասերի զօրացրման ենթակայ ժամկէտային պարտադիր զինծառայողները միահամուռ դիմել են իրենց հրամանատարութեանը՝ խնդրելով դադարեցնել զօրացրումները եւ թողարկել շարունակել ծառայութիւնը իրենց համաձայնակիցների ու հրամանատարների կողքին, քանի դեռ յաղթանակի վերջակէտը դրուած չէ եւ քանի դեռ հակառակորդը ոտնձգութիւնների մտադրութիւն ունի: Չնայած պաշտպանութեան նախարարութիւնը հանդէս էր եկել յայտարարութեամբ, որ կամաւորագրուելու անհրաժեշտութիւն չկայ եւ ՀՀ զինուած ուժերը պատուով կատարում են իրենց առջեւ դրուած մարտական խնդիրները, այնուամենայնիւ, միեւնոյն ժամանակ արդէն զօրացրուած նախկին զինծառայողները, ինչպէս ՀՀ-ում, այնպէս էլ Արցախում, եւ յատկապէս այն զօրամասերի, որոնց ուղղութեամբ վերջին օրերին արձանագրուեցին ստրպէյճանական զինուած ուժերի նախայարձակ գործողութիւններ, դիմում են զօրակոչային եւ զօրահաւաքային համալրման ծառայութեան տարածքային ստորաբաժանումներ (զինկոմիսարիատներ)՝ յայտնելով պատրաստակամութիւն ու վճռականութիւն իրենց ծառայավայր հանդիսացող զօրամասերում կանգնելու մեր զինծառայողների կողքին եւ պաշտպանելու երկրի սահմանը»:

«Քոչարեանի Փաստաբաններու Նպատակը Դատի Ձգձգելն է»,- Սեդա Սաֆարեան

Յունիսի 18-ին գրաւի դիմաց կալանքէն ազատ արձակուած Ռոպերթ Քոչարեանի փաստաբանները վճռաբեկ դատարան բողոք ներկայացուցած են: Անոնք կը վիճարկեն վերաքննիչի դատաւոր Արսէն Նիկողոսեանի՝ 2 միլիարդ դրամ գրաւով Քոչարեանին ազատ արձակելու որոշումը: Անոնք կը համարեն, որ դատաւորը 2 միլիարդ դրամ գրաւի փոխարէն պարգապէս առանց որեւէ խափանման միջոցի պէտք է ազատէր Քոչարեանին:

Մարտի 1-ի զոհերի իրավաչափորդներու ներկայացուցիչ, փաստաբան Սեդա Սաֆարեանն յայտնեց, որ արդէն ստացած է Քոչարեանի փաստաբաններու վճռաբեկ բողոքը, բայց կարծիք կարող է յայտնել միայն բովանդակութեանն ամբողջութեամբ ծանօթանալէ յետոյ:

Սաֆարեան կը կարծէ, որ նման միջնորդութիւններու, բողոքներու նպատակը կը շարունակէ մնալ նոյնը՝ հնարաւորինս ձգձգել դատաքննութիւնը, քանի որ Սահմանադրական դատարանէն անոնց սպասելիքները դեռեւս ուժի մէջ են: «Ռոպերթ Քոչարեանն ու իր թիմը չեն յուսաւրուել, որ Սահմանադրական դատարանը անգամ այս նոր իրողութեան պարագայում կարող է ինչ-որ բան անել յօգուտ իրենց: Կարծում եմ, որ Քոչարեանն ու իր փաստաբանական թիմը



Փաստաբան Սեդա Սաֆարեան

առաջիկայում էլ շարունակելու են թոյլ չտալ, որ դատական նիստը մտնի դատաքննութեան փուլ, հրապարակուի մեղադրական եզրակացութիւնը, հրապարակուեն ու հետազօտուեն ապացոյցները: Ինչքան հնարաւոր է՝ իրենք ձգելու են դատավարութիւնը: Ես սա ասում եմ պաշտօնապէս եւ իմ եզրայանգումների հիմքում դրուած փաստական հանգամանքները դրա վկայութիւնն են: Առաջիկայում դեռ լուրջ պայքար է սպասուում: Մենք էլ մեր խօսքը կ'ստենք եւ չենք կարծում, որ այսպէս մշտապէս նման միջնորդութիւններով նիստերը ձգձգուեն», - ըսաւ Սաֆարեան:

ԱԹՍ-Ներու Կորուստի Հետեւանքով Ատրպէյճան 200 Մլն Տոլարի Վնաս Ունի

Տաւուշի մէջ նախորդ շաբաթ տեղի ունեցած ռազմական գործողութիւններու ընթացքին անօդաչու թռչող սարքերու (ԱԹՍ) կորուստի հետեւանքով ստրպէյճանական կողմը շուրջ 200 միլիոն տոլարի վնաս կրած է: Այս հայկական կողմի նախնական հաշուարկն է: Հայաստանի հակաօդային պաշտպանութեան ստորաբաժանումները 13 ստրպէյճանական անօդաչու թռչող սարք խոցած են Տաւուշի սահմանամերձ հատուածին մէջ, եւս մէկն ալ խոցուած էր Արցախի հիւսիսարեւելեան հատուածը, այսօր՝ Յուլիս 21-ին փոխանցեց Ջիւնուած Ուժերու Հակաօդային պաշտպանութեան զօրքերու վարչութեան շտաբի պետ Գարիկ Մովսիսեան:



Կը ցուցադրուին անօդաչու թռչող սարքերը, որոնք խոցուած են վերջին գործողութիւններու ընթացքին

«Հիմնականում ԱԹՍ-ները բողոքը խոցուել են երրորդ բանակային ջոկատի պաշտպանութեան գօտում, բացառութեամբ մէկ միաւորի, որը բերուած է, ցուցահանդէսում ներկայացուած է, այն խոցուել է Պաշտպանութեան բանակի հաշուարկների կողմից Յուլիս 17-ի առաւօտեան», - յայտնեց Մովսիսեան:

Ըստ ՊՆ-ի ներկայացուցչին՝ ստրպէյճանական անօդաչու թռչող սարքերէն 4-ը հետախուզական, իսկ 10-ն ալ հարուածային էին: Ռազմաօդային համալսարանի պետ Դանիէլ Պալայեան ըսած է, թէ Ատրպէյճանի համար յատկապէս լուրջ վնաս էր իսրայէլական արտադրութեան Elbit Hermes 900 ԱԹՍ-ի կորուստը, որը արժէքը կը հասնի մինչեւ 30 միլիոն տոլարի. «Ամէն մի ԱԹՍ մի քանի հարիւր հազար տոլարների արժողութիւն ունի, իսկ աւելի մեծերը՝ միլիոնաւոր արժէքների: Բացի դրանից, ամենաթանկը, որ կարելի է ասել, մարդկային կորուստներն են բոլորի համար, որ ինքը միաժամանակ

շատ մեծ մարդկային կորուստներ է ունեցել»:

Պաշտպանութեան նախարարութիւնը ստրպէյճանական անօդաչու թռչող սարքերու մնացորդները այսօր Ռազմաօդային համալսարանին մէջ ցուցադրած էր: Նոր խոցուած սարքերու կողքին նաեւ կային հինները: Ըստ Հայաստանի պաշտպանական գերատեսչութեան ներկայացուցչի ներուճն՝ 2016-էն սկսեալ, հայկական կողմը մօտ 40 ստրպէյճանական անօդաչու թռչող սարք խոցած է. «Բացի ORBITER-3-ի նախագծուած մասից՝ մարմիններից, ամբողջ էլեկտրոնային ջոկատի իսրայէլական է, ինչ վերաբերում է հարուածային եւ հրթիռային, ամբողջն ուրեմն իսրայէլական Elbit, Aerospace ընկերութիւնների արտադրանքն է: Ոչ մէկի համար գաղտնիք չի, որ իրենք համագործակցում են եւ Ատրպէյճանում համատեղ գործարան են տեղադրել»:

Ատրպէյճանական կողմը, սակայն, կը շարունակէ հերքել իր խոցուած անօդաչու թռչող սարքերու մասին հայկական կողմի յայտարարութիւնները: Հակառակը՝ Ատրպէյճանի պաշտպանական գերատեսչութիւնը կը յայտարարէ, թէ նախորդ շաբաթուայ ընթացքին իրենք խոցած են հայկական անօդաչուներ: Այդուհանդերձ, Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը կը հերքէ այդ յայտարարութիւնները:

Առաջին Կիսամեակին 1000 Խոշոր Հարկատուները Վճարած են Աւելի Քան Մէկ Միլիարդ Տոլար

Պետական եկամուտներու կոմիտէի կայքին վրայ հրապարակուած է 2020-ի Յունուար-Յունիս ամիսներուն, 1000 խոշոր հարկ վճարողներու կողմէ վճարուած գումարներու վերաբերելու ցանկը: Հազար խոշոր հարկատուներու ցանկը կը գլխաւորէ «Կրանտ Դոպաքո» ընկերութիւնը, որու մուտքերը այս տարուայ Յունուար-Յունիսին կազմած են 26 միլիարդ 339 մլն 387 հազար դրամ: Երկրորդ տեղը «Կազպրոմ Արմենիա»-ն է՝ 25 միլիարդ 978 մլն 780 հազար դրամ մուտքերով, երրորդ տեղը՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմպլիքս»-ը՝ 21 միլիարդ 629 մլն 546 հազար դրամով մուտքերով: Անոր կը յաջորդէ «Կեոփրոմայինի կոլտ»-ը՝ աւելի քան 12 միլիարդ 771 մլն

դրամ մուտքերով, հնգեակը կ'եզրափակէ «Սիֆիէս օիլ»-ը՝ 9 միլիարդ 678 մլն 792 հազար դրամ մուտքերով:

Մոշոր հարկատուներու տասնեակին մէջն են «Ինթերնէշնլ Մասիս տաբակ»-ը, «Ֆլէշ»-ը, «Ֆիլիփ Մորրիս Արմենիա»-ն, «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ը, «ՄՏՍ Հայաստան»-ը:

1000 խոշոր հարկ վճարողներու կողմէն ընդհանուր առմամբ առաջին կիսամեակին վճարուած է աւելի քան 492 միլիարդ 668 մլն դրամ: Հարկային մարմին կատարուած վճարումներու գումարը կազմած է աւելի քան 412 միլիարդ 606 մլն, իսկ մաքսային մարմին կատարուած վճարումներու գումարը կազմած է աւելի քան 80 միլիարդ 62 մլն դրամ:

# ԼՈՒՐԵՐ

## Փաշինեան. Ատրպէյճան Չի Կրնար Ստիպել Մեզի Չհիմնաւորուած Եւ Սիակողմանի Զիջումներու Երթալ



Վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ կուրնեայ Եւրասիական միջկառավարական խորհուրդի նիստին

Աշխատանքային այցով Պեյլաուսիա գտնուող վարչապետ Նիկոլ Փաշինեան Մինսքի մէջ մասնակցած է Եւրասիական միջկառավարական խորհուրդի հերթական նիստին, յայտնած են կառավարութեան աշխատակազմէն:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան իր խօսքին մէջ նշած է, որ Հայաստանի մէջ համաճարակաբանական իրավիճակը կը շարունակէ մնալ ծանր, չնայած որոշ յուսադրող թիւերու, որոնք վերջին օրերուն յայտնուած են մեր վիճակագրութեան մէջ: «Համավարակը իսկապէս բացասաբար է անդրադարձել մեր կեանքի բոլոր կողմերի վրայ: Այսօր այս դժուարութիւններն այս կամ այն չափով զգուճ են աշխարհի բոլոր երկրներն առանց բացառութեան: Աւելի քան ակնյայտ է, որ համավարակի դէմ պայքարի եւ դրա արդիւնքում առաջացած տնտեսական ճգնաժամի դէմ յաջող պայքարի համար կարեւոր նախապայման է խաղաղութեան պահպանումը եւ զինուած հակամարտութիւնների դադարեցումը:

Այս առումով չեմ կարող չանդրադառնալ մի թեմայի, որը կենսական նշանակութիւն ունի մեզ համար եւ մեր տարածաշրջանում կայունութեան պահպանման համար:

Ինչպէս գիտէք, Ատրպէյճանը, անտեսելով համավարակի պայմաններում զինուած բախումների դադարեցման բազմաթիւ կոչերը, այդ թուում՝ Ապրիլ 14-ի Բարձրագոյն

Եւրասիական տնտեսական խորհուրդի համատեղ յայտարարութիւնը եւ ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարի Մարտ 23-ի յայտարարութիւնը, սանձազերծեց ուղղման գործողութիւններ Հայաստանի սահմանի հիւսիսարեւելեան ուղղութեամբ: Հայաստանի զինուած ուժերը չէին կարող չպատասխանել Ատրպէյճանի սադրիչ գործողութիւններին», - նշած է ՀՀ վարչապետը՝ աւելցնելով, որ սադրանքները կը շարունակուին առայսօր՝ նպատելով լարուածութեան պահպանման եւ իրավիճակի անկայնութեան լիութեան:

«Ատրպէյճանի յարձակողական քաղաքականութիւնը, որն ուղղուած է տարածաշրջանում լարուածութեան սրմանը, ոչ մի տեղ չի տանում: Նա չի կարողանայ կոտրել մեր ժողովրդի վճռակալութիւնը եւ ստիպել մեզ չհիմնաւորուած եւ միակողմանի զիջումների գնալ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցում: Հակամարտութեան ուժային լուծում գոյութիւն չունի, եւ խաղաղ բանակցութիւնները չունեն այլընտրանք, ինչը համապատասխանում է մեր տարածաշրջանի բոլոր ժողովուրդների շահերին», - նկատել տուած է Փաշինեան:

Նիստի ընթացքին քննարկուած է Եւրասիական միաձուլման հարցերու լայն շրջանակ, առեւտուրի, ներքին շուկայի գործունէութեան, մրցակցութեան, արդիւնաբերութեան, արդիւնաբերական կարգաւորման եւ այլ ոլորտներուն վերաբերող թեմաներ:

## Հայաստանի Մէջ Վարակակիրներու Գերակշիռ Մասը Թեթեւ Ընթացքով է

«Քորոնա» ժահրի դէպքերուն թիւը Հայաստանի մէջ կը շարունակէ աճիլ, Յուլիս 21-ի դրութեամբ հասնելով 35254-ի: Սակայն, Հիւանդութիւններու վերահսկման եւ կանխարգիլման ազգային կեդրոնի վարակիչ հիւանդութիւններու բաժնի պետ Լիանա Թորոսեան «Ազատութեան» փոխանցած է, թէ հիւանդներէն միայն 1889-ը կը գտնուին հիւանդանոցներուն մէջ. - «Սա ի՞նչ է փաստում, որ գերակշիռ մասը թեթեւ ընթացքով են, որոնք որ գտնուում են առաջնային բժշկական օգնութեան հսկողութեան ներքոյ, եթէ տոկոսային յարաբերութեամբ էլ խօսենք, գրեթէ 10-15 տոկոսն է, որ ունի հիւանդանոցային պայմաններում բուժման կարիք: Մնացածն ինքնա-

մէկուսացման պայմաններում են: Սա էլ է գոհացնող ցուցանիշ, բայց ինչ խօսք, մենք պէտք է ամէն գործիքակազմ, անձնակազմի ներուժ ուղղորդենք, որ կարողանանք այդ թուերը ժամանակ առ ժամանակ իջեցնել»:

Յուսադրող է, որ վերջին օրերուն շատցած է ապաքինուածներուն թիւը:

Մէկ օրուայ մէջ նաեւ արձանագրուած է մահուան 6 դէպք, երբ վարակակիրներու մօտ հաստատուած է COVID-19-ը, սակայն մահը վրայ հասած է այլ հիւանդութեան պատճառով: Փաստօրէն, Հայաստանի մէջ «Քորոնա» ժահրէն մահացածներու ընդհանուր թիւը հասաւ 662-ի, եւս 215 վարակակիր մահացած է այլ պատճառներով:

## Կարօ Փայլան Զաւուշօղլուէն Հետաքրքրուած է Անգարայի Կողմնակալութեան Պատճառներու Մասին

Թուրքիոյ խորհրդարանի հայազգի պատգամաւոր Կարօ Փայլան հայցադիմում ուղղած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարար՝ Մեւլութ Չաւուշօղլուին, վերջին օրերուն հայ-ատրպէյճանական սահմանին վրայ տեղի ունեցած բախումներու ֆոնին թրքական իշխանութիւններուն դրսեւորած միակողմանի վերաբերմունքի առնչութեամբ:

Յիշատակելով Թուրքիոյ բարձրագոյն ղեկավարութեան Ատրպէյճանին անվերապահօրէն աստարող յայտարարութիւնները, Փայլան ընդգծած է. - «Թուրքիան, որպէս Ատրպէյճանի ու Հայաստանի միջեւ ծագած խնդիրներու լուծման նպաստող ԵԱՀԿ Մինսքի խումբի անդամ, պէտք է չեզոքութիւն ցուցաբերէր: Մինչդեռ իշխանութիւնները կողմնակալ դիրքորոշում որդեգրած են եւ լարուածութիւնը թէժացնող յայտարարութիւններ ըրած»:

Փայլանը Չաւուշօղլուին հետեւեալ հարցերը ուղղած է. - «Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ ծագած հակամարտութեան մէջ ցեղային պատճառներով է, որ կողմնակալութիւն կը ցուցաբերէք: Դեռ չէ՞ք հասկցած, որ խտրական արտաքին քաղաքականութիւնը «կրակի վրայ իւղ լեցնել» կը նշանակէ եւ միայն կը խորացնէ հակասութիւնները: Թուրքիոյ ռազմական արդիւնաբերութիւնը կը ցանկանայ աւելի շատ զինամթերք վաճառել Ատրպէյճանին: Արդեօք այս պատճառով է, որ կը սասուկացնէք լարուածութիւնը: Կը մտածէ՞ք Ատրպէյճան գօրք ուղարկելու մասին: Եթէ Թուրքիան ցեղային



Թուրքիոյ խորհրդարանի հայազգի պատգամաւոր Կարօ Փայլան

պետութիւն չէ, ուրեմն ինչո՞ւ արտաքին քաղաքականութիւնը կը վարէ ցեղապաշտական մօտեցումներով: Կը չի չէ՞ք արդեօք Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ լարուածութիւնը նուազեցնելու համար հիմնադրուած ԵԱՀԿ Մինսքի խումբի անդամ ըլլալու մասին: Դեռ չէ՞ք հասկցած, որ Կովկասի անկայունութեան Ռուսաստանը կը շահի: Ինչպէ՞ս կը մեկնաբանէք Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան՝ հայ-թրքական սահմանին գտնուող աթոճակայանին հարուածելու սպառնալիքները»:

Աւելի վաղ, հայազգի պատգամաւորը թրքական իշխանութիւններուն կոչ ըրած էր գերծմնալու կողմերու միջեւ լարուածութիւնը թէժացնող քայլերէն:

## ԱԳ Նախարարութիւնը Աթոճակայանը Հրթիռակոծելու Սպառնալիքները, Կ'որակէ Պետական Ահակերկշուրիւն

«Այն գործողութիւնները, որոնցով Ատրպէյճանի Պաշտպանութեան նախարարութիւնը սպառնում է, հանդիսանում են միջազգային մարդասիրական մարդու իրաւունքի եւ, մասնաւորապէս, ժընեւեան համաձայնագրի առաջին լրացուցիչ արձանագրութեան աղաղակող խախտում: Նմանօրինակ սպառնալիքները պետական անհրաժեշտութեան ուղղակի դրսեւորում են եւ արտայայտում են Ատրպէյճանի ցեղասպան մտադրութիւնները: Աւելին, Ատրպէյճանի ղեկավարութիւնը նման յայտարարութիւններով հանդէս է գալիս որպէս սպառնալիք տարածաշրջանի բոլոր ժողովուրդների, այդ թուում՝ սեփական ժողովրդի համար», - ըսուած է Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան յայտարարութեան մէջ:



Մեծամորի աթոճակայանի համայնապատկերը

Պատասխանելով «Ազատութեան» հարցին, թէ այս պահուն Հայաստանի ԱԳՆ-ը ինչ քայլեր կը ձեռնարկէ պաշտօնական Պաշտպանութիւնը հնչեցուած սպառնալիքի ուղղութեամբ՝ արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Աննա Նաղ-

տալեան ըսաւ, որ նախարարութիւնը գործի պիտի դնէ իր ողջ գործիքակազմը:

Նշենք, որ Հայաստանը կը հանդիսանայ Աթոճակայանի ուժանիւթի միջազգային գործակալութեան անդամ, եւ արտաքին գերատեսչութիւնը այս կառույցին, ամենայն հաւանականութեամբ, նոյնպէս կը դիմէ:

«Այս պահի դրութեամբ կարող եմ պարզապէս յաւելել, որ հարցի առնչութեամբ Արտաքին գործոց նախարարութիւնը գործի է դնելու իր մօտ առկայ ողջ գործիքակազմը: Յաւաք սրտի, ելնելով որոշակի սահմանափակումներից, չեմ կարող առաւել մանրամասներ տրամադրել», - ըսաւ Նաղտալեան:



# Իսրայելից Մասնագետներ Են Հրահրուել Ատրայեյճան՝ Բացատրելու, Թե Ինչպես Են Հայկական Ուժերը Խոցում ԱԹՍ-ները. Լապշին



Յուլիսի 12-ից Հայաստանի եւ Ատրայեյճանի սահմանի Տաուռչի հատուածում իրավիճակի կտրուկ սրման պատճառով ատրայեյճանական բանակը հայկական դիրքերի ու խողովակային ենթակառուցվածքի վրայ կիրառեց թէ՛ ռուսական հրետանային համակարգեր, ռուսական արտադրութեան զինատեխնիկա եւ թէ՛ հրէական անօդաչու հարուածային եւ հետախուզական թռչող սարքեր, ինչպէս ապրիլեան քառօրեայ պատերազմի ժամանակ:

Այս անգամ, սակայն, հայկական հակաօդային պաշտպանութեան ուժերի կողմից շատ աւելի արդիւնաւէտ կերպով խոցուեցին իսրայելական արտադրութեան ԱԹՍ-ները, քան ապրիլեան քառօրեայ ժամանակ: Նախկինում Ատրայեյճանն օգտագործում էր Israel Aerospace Industry պետական ձեռնարկութեան Harop հարուածային ԱԹՍ՝ մօտ 4 միլիոն տոլար արժողութեամբ, ու 2017 թուականի Aeronautics Defence System-ի Orbiter 1K հարուածային անօդաչու թռչող սարքերի յայտնի սկանդալից յետոյ, Պաքուի ձեռք բերած հարուածային ու հետախուզական ԱԹՍ-ների բանակը համալրուեց Elbit Systems ամենամեծ ոչ պետական ձեռնարկութեան SkyStriker հարուածային եւ Hermes 900 հետա-

սկին է, որ յաջողութեամբ խոցում է իսրայելական արտադրութեան ԱԹՍ-ները:

Հայ-ատրայեյճանական մարտական գործողութիւնների ժամանակ օգտագործուող իսրայելական ԱԹՍ-ների փաստերի հետ կապուած «Ազատութիւն» պաշտօնական նամակ է ուղարկել իսրայելի պաշտպանութեան նախարարութիւն: Ի դէպ, 2017 թուականից ունենք դեռ անպատասխան նամակներ Aeronautics Defence System-ի շուրջ ծագած սկանդալի հետ կապուած:

Հայ-ատրայեյճանական սրուած յարաբերութիւնների, իսրայելից Ատրայեյճան մեկնած մասնագէտների, Մեծամօրի ատոմակայանին հարուածելու Ատրայեյճանի յայտարարութիւնների շուրջ գրուեցին իսրայելի ու Ռուսաստանի քաղաքացի, յայտնի բլոգեր ու լրագրող Ալեքսանդր Լապշինի հետ:

«Ես կարծում եմ, որ խոշոր ու լայնածաւալ հակամարտութիւն ձեռնարկ է ոչ Հայաստանին եւ ոչ էլ Ատրայեյճանին, որովհետեւ բոլորին բաւարարում է այն «ստատուս քուոն», որը գոյութիւն ունի 90-ական թուականների Դարբաղեան պատերազմից յետոյ, եւ կորոնավիրուսի համաճարակով պայմանաւորուած խիստ նուազել են Ատրայեյճանի եկամուտները՝ նախ զին-

գուցէ ինչպէս 2017-ի դրոնի սկանդալի ժամանակ էր, հրեայ օպերատորներն այս անգամ էլ հեռակառավարման վահանակները ձեռքերը վերցնեն, Ալեքսանդր Լապշինը պատասխանեց. «Ես չեմ համաձայնի այն կարծիքին, որ իսրայելական մասնագէտները մեկնել են Ատրայեյճան, որպէսզի անօդաչու սարքերի հեռակառավարման վահանակները ձեռքերը վերցնեն ու հարուածեն Հայաստանին, սակայն ինչի հետ եմ համաձայն՝ որ նրանք հիմա այնտեղ են ու ատրայեյճանական մասնագէտներին սովորեցնում են այնպէս կառավարել, որ Հայաստանին չյաջողուի ապագայում խոցել այդ ԱԹՍ-ները: Սա հնչում է ոչ զեղեցիկ եւ շատ ցինիկ, սակայն մենք ապրում ենք մի աշխարհում որտեղ ամէն ինչ որոշում է քաղաքականութիւնն ու փողը»:

Ինչ վերաբերում է Ատրայեյճանի սպառնալիքներին Մեծամօրի ատոմակայանին հարուածելու հետ կապուած, ապա Լապշինն ասաց. «Նրանք այդ քայլին չեն գնաց: Մենք, ձեզ հետ միասին, բնակուելով իսրայելում՝ շատ լաւ գիտենք, թէ ինչ արժեն սպառնալիքները, որ ուղարկում են, օրինակ, Իրանը, «Հրզպալա»-ն ու «Համաս»-ն իսրայելի հասցէին շաբաթական առնուազն երկու անգամ՝ սպառնալով ոչնչացել իսրայելը: Մեծամօրի ատոմակայանում աշխատում են տասնեակ ու հարիւրաւոր ռուս մասնագէտներ, ու այդ ատոմակայանը պաշտպանում է նաեւ ռուսական 102-րդ ռազմաբազան, եւ նոյնիսկ խոցելու դէպքում եթէ յաջողուի, ապա կը լինի Չեռնոբիլի օրինակը», - համոզուած է լրագրողը:

Ի դէպ, հրեայ բլոգերը մեզ հաղորդեց, որ Ատրայեյճանը մինչեւ օրս չի հրաժարուել իրեն կրկին ձեռքարկելու, առեւանգելու եւ



նոյնիսկ սպանելու փորձերից:

2019 թուականի Դեկտեմբերին գրօսաշրջութեան միջազգային ֆորումին մասնակցելու համար Լատվիայի մայրաքաղաք Ռիգա ժամանած բլոգերին բրիտանական լատուկ ծառայութիւնները հաղորդել էին, որ Ատրայեյճանի պետական անվտանգութեան ղեկավար գեներալ Ալի Նազիբը հրահանգել է Լատվիայի ամենահարուստ գործարար մի ատրայեյճանցու առեւանգել եւ լատուկ բնակարանում սպանել Լապշինին: Նրան Լատվիայում դիմաւորել էին լատուկ ծառայութիւնները եւ ուղեկցել էին Երկրի օդանավակայան եւ ուղարկել իսրայել:

«Մեծ սկանդալ էր տեղի ունեցել, եւ Ռուսաստանում որոշ մարդկանց, ովքեր ինձ աջակցում են, հաղորդած տեղեկութիւնների համաձայն, Ալի Նազիբը շատ է զայրացել եւ հրամայել է այդ հարուստ ատրայեյճանցուն առաջադրանքը կատարել իսրայելում», - պատմեց բլոգերը:

Լապշինն այժմ գտնուում է իսրայելի լատուկ ծառայութիւնների պաշտպանութեան ներքոյ:

## Բանակը՝ Կապիտալի Համաներման Ծանապարհ

Շարունակուած էջ 1-էն

Նախկին կողուպցիոն համակարգի գործունէութեան հետ կապուած հարցերը:

Այլ կերպ ասած, Հայաստանի համար բարդ մարտահրաշխիք, բարդ իրավիճակի պայմաններում նրանք հերթական անգամ ի ցոյց էին դնում իրենց իսկ խնդիրը լուծելու անհրաժեշտութիւնը: Միեւնոյն ժամանակ, այդ իմաստով, կողուպցիոն փողերի վերադարձն ու բանակին ծառայեցնելու հանգամանքը կարելի է դիտարկել նաեւ որպէս հանգուցայլուծման իւրօրինակ փոխզիջումային բանաձեւ, հանրութեան եւ խնդրահարոյց ճանապարհով եւ լեզուփոխութեան խնդիր ունեցող կապիտալի ու հանրութեան յարաբերութեան պարզաբանման բանաձեւ՝ վերադարձրէք փողը բանակ, ինչը

թոյլ կը տայ հանրութեան հետ քննարկել այսպէս ասած՝ խնդրահարոյց կապիտալի եւ դրա կրողների «համաներման» հարցը, յաղթահարելով հանգուցային, խորքային խնդիրներից մէկը: Դա բխում է թէ՛ պետութեան ու հանրութեան եւ թէ՛ հենց այդ կապիտալի կրողների շահերից, եթէ, իհարկէ, առաջնորդուենք ողջախոհութեան կանխավարկածով ու եզրակացնենք, որ մարդկանց թերեւս չպէտք է հաճոյք պատճառի այն, որ հանրութեան եւ հայրութեան անուշի մասը, մեղմ ասած, ոչ հաճելի յիշատակումներով է խօսում իրենց մասին: Բարոյական, արժէքային նորմերի ոտնահարմամբ այդ խօսակցութիւններն էլ աւելի գրգռելու փոխարէն՝ գուցէ արժէ խորհել հանրութեան հետ այդ փոխզիջման ճանապարհը դիտարկելու մասին:



խուզական ԱԹՍ-ներով:

Իւրաքանչիւր հայ-ատրայեյճանական ռազմական բախումների ժամանակ կամ անմիջապէս յետոյ Ատրայեյճանի կողմից հրահրուում են իսրայելից մասնագէտներ, որոնք տեղում իրենց ատրայեյճանցի գործընկերների հետ քննարկում են իսրայելական արտադրութեան անօդաչու թռչող սարքերի՝ հայկական հակաօդային պաշտպանութեան ուժերի կողմից խոցուելու փաստերի պատճառները: Այս անգամ շատ աւելի արժէքաւոր ու շօշափելի վնաս կրեց ատրայեյճանական ԱԹՍ-ների պարկն, ու կարելի է փաստել, որ Elbit Systems-ի թանկարժէք երկրորդ սերնդի գերժամանակակից թռչող հետախուզական Hermes 900 սարքն էր խոցուել՝ մօտ 30 միլիոն տոլար արժողութեամբ:

Նախկինում հայկական բանակը խոցել էր առաջին սերնդի Hermes 450 տեսակի երկու սարք: Ի դէպ, պէտք է փաստել, որ հայկական բանակն աշխարհում մի-

րի անկման հետ կապուած, որն էլ հասարակական դժգոհութիւններ է առաջացրել չքաւորութեան, կառավարող ռեժիմի դէմ երկրում, ինչի պատճառով էլ ժողովրդի ուշադրութիւնն ինչպէս միշտ սեւեռուում է արտաքին թշնամու՝ հայերի դէմ:

Տեղեկութիւններ են շրջում, որ արդէն Պաքու եւ ժամանել հրեայ մասնագէտներ, որոնց ատրայեյճանական կողմը հրահրել է բացատրելու, թէ ինչպէս են հայկական հակաօդային պաշտպանութեան ուժերը խոցում հրէական այդքան թանկարժէք ԱԹՍ-ները:

Որքան ես գիտեմ, նրանք արդէն այնտեղ են, բայց ես սա չեմ դիտարկի որպէս Հայաստանի դէմ սպառնալիք, որովհետեւ երբ շատ մեծ գումարները գնէք է ձեռք բերուում, ապա այն, իհարկէ, ուղեկցում է խորհրդատուութեամբ ու տեխնիկական սպասարկմամբ», - ասաց պարոն Լապշինը:

«Ազատութեան» հարցին, թէ

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸՎԱՄԻ)  
**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸՎԱՄԻ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**(626) 797-7680**

# «Սահմանային Համայնքներու Հզօրացում»- Դրամահաւաք-Արշալ



«Մենք չենք կոտորուի, չենք յանձնուի, սա մեր տունն է, մեր հողը, մեր դարաւոր իրաւունքը, նրանք քանդում են, մենք կառուցում ենք»՝ Տաւուշի անվախ բնակիչներն անսասան վճռականութեամբ կանգնած են անկանխատեսելի եւ վտանգաւոր թշնամիի դէմ՝ պաշտպանելու իրենց տունը, իրենց երկիրը եւ մեր սահմանները: Սահմանապահ համայնքները Հայաստանի եւ Արցախի անվտանգութեան համար ռազմավարական նշանակութիւն ունին, ուստի այդ համայնքներուն անվտանգային, սնտեսական եւ ընկերային աջակցութիւնը համազգային առաջնահերթութիւն է:

Տարիներ շարունակ Հիմնադրամը կ'աջակցի մեր սահմաններու պահպանման համայնքներուն՝ ենթակառուցումներ, մանկապարտէզներով, համայնքային կեդրոններ, դպրոցներ, մանկապարտէզներ, հիւանդանոցներ, ընկերային բնակարաններ կառուցելով, բուժանձնակազմներուն նոր գիտելիքներ փոխանցելով, հիւանդանոցներուն նորագոյն սարքեր տրամադրելով, նորարարական գիւղատնտեսական նախագծերով, արեւալին ուժի վահանակներով ու ջրատաքացուցիչներով, մաքուր խմելու ջրով եւ այլն:

Հիմա աւելի, քան երբեք, այս աջակցութիւնն անհրաժեշտ է, որ պիտի օգնէ հզօրացնել Տաւուշի սահմանային բնակավայրերու ռեսուրսները եւ կայունացնել համայնքները, ամուր պահել հայրենի հողն ու ջուրը, եւ, ի վերջոյ, ապահովել սահմանների անվտանգութիւնը: Օրեր առաջ խախտուած հրադադարը կրկին ակնործեց մեր երկրի խաղաղութիւնը: Այսօր, ինչպէս միշտ, բոլորս համախմբուած ենք, բոլորս նպատակը մէկ է՝ խաղաղ երկիրք եւ արեւաշատութիւն մեր երկրին:

Հիմա աւելի քան երբեք, այս

աջակցութիւնն անհրաժեշտ է, որ պիտի օգնէ հզօրացնել Տաւուշի սահմանային բնակավայրերի ռեսուրսները եւ կայունացնել համայնքները, ամուր պահել հայրենի հողն ու ջուրը, եւ, ի վերջոյ, ապահովել սահմանների անվտանգութիւնը:

Այսօր սահմանային համայնքներու բնակիչները մեր, որպէս միասնական համահայկական ընտանիքի, աջակցութեան կարիքն ունին:

Հաւաքագրուած ողջ գումարը կ'ուղղուի սահմանային համայնքների ամենահրատապ անհրաժեշտութիւն ունեցող ընկերատնտեսական խնդիրներու հասցեագրմանը՝ սկսած վնասուած տուները վերակառուցելու, համայնքները վերականգնող ու ժանիւթով եւ խմելու ջրով ապահովելու, տուժած համայնքներուն ընկերային աջակցութիւն ցուցաբերելով, սահմանային հիւանդանոցները հզօրացնելով մինչեւ դպրոցականներին հեռավար կրթութեան համար անհրաժեշտ գործիքներ տրամադրելը:

Կոչ կ'ընենք միանալ համահայկական այս կարեւոր ձեռնարկին: Ձեր նուիրատուութիւնները կարող էք իրականացնել՝ փոխանցումներ կատարելով «Հայաստան» հիմնադրամի պանկային հաշուհամարներուն (տե՛ս կայքէջին մէջ) եւ նպատակի բանին մէջ նշելով՝ «Սահմանային համայնքներու հզօրացում», ինչպէս նաեւ հիմնադրամի կայքին մէջ ստեղծուած յատուկ դրամահաւաք-արշալի այս հարթակում՝

<https://www.himnadram.org/hy>:

Նուիրատուութիւնները կարող էք իրականացնել նաեւ Սփիւռքի մէջ գործող Հիմնադրամի տեղական մարմիններու միջոցով: Բոլոր նուիրատուներու անունները եւ նուիրաբերած գումարներու չափը այս էջին մէջ պիտի տեղադրուի:

# Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Դանիէլ Եպիսկոպոս Ֆրնտորքեանի Պատգամը, Հայաստանի Հիւսիսային Կողմի Կրայ Յարձակման Առթիւ

Միացեալ Հաւատացեալներ, Մենք բոլորս ազդուած ենք այս շաբաթ սարսափելի այն լուրերով, որ Ատրպէյճանական զօրքը կրկին յարձակում գործած է Հայաստանի հիւսիս-արեւելեան սահմանին, մի բան որ տասնամեակներով ըրած է մեր հայրենիքի եւ ժողովուրդի հանդէպ:

Հայկական բանակի զինուորները, որոնք իրենց կեանքը վտանգի տակ դրին ի պաշտպանութիւն մեր անկախ ազգին, քաջօրէն ետ մղեցին սահմանը ներխուժողներուն: Բայց ցաւալիօրէն, չորս զին ծառայողներ - Քսանապետք՝ Գրիշա Մաթեոսեան եւ Սմբատ Գաբրիէլեան, հրամանատար՝ Սօս Էլպաքեան եւ Մայր կամ յիսնապետ՝ Գարուշ Համբարձումեան - իրենց կեանքը կորսնցուցին կռուի ընթացքին: Հայաստանի կառավարութիւնը յետ մահու պարգեւատրեց անոնց շքանշաններով:

Մեր Կաթողիկոսը, Նորին Սուրբ Օծութիւն Գարեգին Բ, սրտառուչ արտայայտութեամբ մը, որպէս հայր մեր բոլոր ժողովուրդին, ուղեւորուեցաւ դէպի Տաւուշի շրջան, որտեղ յարձակումը գործուած էր, անձնապէս հանդիպելու բանակին հետ եւ քաջալերելու անոնց սրտերը եւ նախագահելու Մայր կամ յիսնապետ՝ Համբարձումեանի յուղարկաւորութեանը:

Այս տիւրը առիթով, իր պատգամին մէջ Նորին Սրբութիւնը հաստատեց որ մենք՝ Հայերս «խաղաղասէր ժողովուրդ ենք, բայց մենք յաւէտ պիտի մերժենք որեւէ յարձակում մեր ազատութեան եւ ինքնութեան վրայ: Մենք գիտենք, որ խաղաղութիւնը կ'ապահովուի եւ կը սրբագործուի մեր երկրի քաղաքացիներու արեամբ, որոնք զոհած են իրենց կեանքերը մեր սուրբ հայրենիքի եւ մեր անկախութեան համար: Որպէս սիրոյ երախտիք, մենք կը խոնարհինք այն բոլոր զաւակներու յիշատակին, որոնք իրենց կեանքը տուին պաշտպանելու մերը»:

Այս զգացումներուն, մէկը կրնայ միայն, «Ամէն» ըսել: Այսօր մենք որպէս թեմ, աշխարհացրիւ Հայերս հետ, կը կանգնինք մեր կաթողիկոսի ազնիւ մխիթարական վճռակամ արտայայտութեանց: Մենք կը կանգնինք մեր հայրենիքի հետ եւ կը մերժենք այս շաբթուան յարձակումը Հայաստանի անկախութեան եւ ապահովութեան դէմ: Եւ մենք կը կանգնինք մեր բոլոր հայրենակիցներուն կողքին, մեր ունեցած կեանքի կորուստներու համար, եւ շարունակ սպառնացող վտանգին՝ մեր խաղաղասէր ժողովուրդին:

Մենք բոլորս գիտենք, որ Հայաստանը անցեալին ալ այսպիսի յարձակումներ ետ մղած է եւ Աստուծոյ շնորհքով մեր ժողովուրդը կրցած է գլուխ հանել այդ ծանր պարտականութիւնը: Բայց ներկայի յարձակումը կը բացայայտէ նոր ուղղութիւն մը թշնամիին անգթութեան, որովհետեւ այն տեղի կ'ունենայ համաշխարհային համաճարակի դժուար պայմաններուն մէջ: Երբ ողջ աշխարհը կեդրոնացուցած է իր ուշադրութիւնը պայքարելու մահացու ժահրի մը դէմ, Ատրպէյճանը կ'ընտրէ



առիթը օգտագործել աւելի ցաւ եւ տանջանք պատճառելու անմեղ ժողովուրդին:

Ես պիտի աւելցնեմ, որ այցելած ըլլալով Տաւուշ - որտեղ մեր Հայ Օգնութեան Ֆրոնտը կ'իրագործէ շատ մը կենսական ծրագրեր թեթեւեղ աղքատութեան բեռը շրջանին - այդ բարի ժողովուրդը յատկապէս խոցելի է այժմ: Ներկայիս անոնք ենթակա են յարձակման, իրենց քաղաքացիական կեդրոններով, թիրախաւորուած Ազգերի անխիղճ հրթիռարձակումներուն: Թէեւ աղքատ, Տաւուշի ժողովուրդը զօրաւոր եւ կարող է, ինչպէս որ փաստած է նախորդ յարձակումներուն: Թող Աստուած անոնց շնորհէ աւելի ուժ եւ ապահովութիւն այս ժամանակներուն:

Միւրեւի ժողովուրդս, միասնաբար աղօթք մատուցենք այս փորձութեան օրերուն: Աղօթենք որ մեր յաղթական Տէրը պիտի պաշտպանէ մեր հայրենիքը, եւ ներշնչէ աւելի հաստատակամութիւն մեր ժողովուրդին: Աղօթենք Նորին Սրբութիւն Գարեգին Բ ին համար, Հայաստանի կառավարութեան, Հայոց բանակին, որոնք մեր երկիրը կը պաշտպանեն եւ կը ծառայեն քաղաքացիներուն:

Նաեւ մեր զօրակցութիւնը յայտնենք այն բոլորով որ կարող ենք, յատկապէ՛ս հաղորդակցելով մեր շրջանի քաղաքական ներկայացուցիչներուն հետ, շեշտելով որ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը պէտք է դատապարտէ Հայաստանի վրայ յարձակումը, քաջալերէ խաղաղութիւնը շրջանին մէջ եւ յետս կոչէ իր զօրակցութիւնը Ատրպէյճանին, որով ան կը հետապնդէ իր անհանդուրժողական նպատակները:

Անցնող օրերու դէպքերը - յաւելելով անցեալ ամիսներու եղածներուն վրայ - ցոյց կու տան թէ՛ որքան, աւելի քան երբեք մարդկութիւնը պէտք ունի երկնաւոր Փրկչի մը: Դարերով, մեր ժողովուրդը ճանչցած ու ողջագուրած է այդ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի անձին մէջ, եւ ան մեզ հետ է այժմ եւ միշտ: Մենք կը բարձրացնենք մեր աչքերն ու ձայները դէպի երկինք հացելու իր կամքին: Երբ կը մօտենանք վարդավառի ներշնչող տօնին, միացած հոգիով բոլոր Հայ Քրիստոնեաներս աւելի լայն բանանք մեր սրտերը Աստուծոյ պայծառակերպող ուժին:

Աղօթարար՝  
Դանիէլ Եպիսկոպոս  
Առաջնորդ

NATIONAL NOTARY ASSOCIATION  
NOTARY PUBLIC

**Garine Depoyan**

626-755-4773

554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106  
ghdepyan@gmail.com

### Մահ Պոլսահայ Բանաստեղծ Եւ Արծակագիր Վարդ Շիկահերի

Պոլսահայ մամուլէն կ'իմանանք թէ մահացած է պոլսահայ մտաւորականութեան վառ դէմքերէն Տօքթ. Վարդ Շիկահեր: Հանգուցեալը՝ թրքահայ ազգային-եկեղեցական կեանքի արդի տարեգրութեանց մէջ, իր ուրոյն հետքը ձգած անձնաւորութիւն մը եղած է: Ան եղած է համայնքային յայտնի վարիչ մը եւ հասարակական նշանաւոր գործիչ մը: 94 ամեայ Վարդ շիկահեր՝ որպէս գրող եւ բանաստեղծ, հեղինակած է բազմաթիւ գիրքեր: Եղած է նաեւ կրթական մշակ հասցնելով սերունդներ: Ան անցեալ Շաբաթ հողին յանձնուեցաւ Պոլսոյ մէջ, ազգային յուղարկաւորութեամբ, նախագահութեամբ Ամեն. Տ. Սահակ Բ. Պատրիարքի, որ նաեւ դամբանախօսած է, դրուատելով հանգուցեալի արժանիքները: Այս առթիւ կարդացուած է Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ.



կաթողիկոսի ցաւակցագիրը: Վարդ Շիկահերի մահով պոլսահայ գրականութիւնը կորսնցուց իր տաղանդաւոր գաւազներէն մէկը եւս, որ մասնաշատուկ դրոշմ ձգած է այս գրականութեան վրայ:

### Դերասան Եւ Բեմադրիչ Սիմոն Աբգարեան Մեծարուեցաւ Փարիզի Հայաստանի Դեսպանատան Սէջ



Փարիզի «Նոր Յառաջ» թերթէն կ'իմանանք թէ Ֆրանսայի Հայաստանի դեսպանատունը ընդունելութիւն մը սարքած է իր պարտէզին մէջ: Օրուան մեծարեալն էր յայտնի բեմադրիչ եւ թատերագիր Սիմոն Աբգարեան: Ան շուրջ ամիս մը առաջ արժանացած էր Ֆրանսայի թատերական «Մոլիէր» երեք մրցանակներու, իր «Էլէքթրէ տօ Պաս Ֆոնտ» թատերախաղով: Հաւաքոյթին մասնակցած են շուրջ 70 հրաւիրեալներ, որոնց մէջ կը գտնուէին նաեւ մրցանակակիր թատերախաղի դերասանները: Դեսպանուհի Յամիկ Տոլմաճեան, ԻԻՆՅՍՔՕ-ի մէջ Հայաստանի դեսպան Քրիստիան Տէր Ստեփանեանի

ներկայութեան մեծարեց Սիմոն Աբգարեանը, դրուատելով անոր թատերագրի, բեմադրիչի ու դերասանական կարողութիւնները, որոնց համար ան արժանացած էր երեք «Մոլիէր»ներուն: Իր սրտի խօսքն արտասանելով Սիմոն Աբգարեան շնորհակալութիւն յայտնեց թատերախաղի բոլոր անդամներուն: Ան իր այս յաջողութիւնը սեպեց բոլորի հաւաքական ներդրումի յաջողութիւնը, միաժամանակ՝ նկատել տուաւ որ էականը միասնական ստեղծագործութիւնն էր, որուն բոլորն ալ իրենց գեղարուեստական ու նիւթական ներդրումն ունեցած են այս գործին մէջ:

### Սզկիթը Կը Վերածուի Հարսանեաց Սրահի Եւ Պարի

Իսրայէլի Սաֆէտ քաղաքի քաղաքապետութեան որոշումով «Ալ Ահմար» մզկիթը վերածուած է հարսանեաց եւ այլ հանդիսութեանց սրահի ու պարի: «Ալ Քուտս Ալ Արապի» թերթին համաձայն, այս արաբական քաղաքի պատմական մզկիթը 1948ին բռնազրաւուած է հրեայ գինեակներու կողմէ: Սկզբնական շրջանին շէնքը վերածուած է հրեական վարժարանի: Այնուհետեւ օգտագործուած է Լիբուտ կուսակցութեան կողմէ, որպէս ընտրարշաւի կեդրոն: Ապա զգեստեղէնի միջ-

րանոցի, իսկ ներկայիս հարսանեաց եւ հանդիսութեանց սրահի եւ պարի: Արդարեւ, «Ալ Ահմար» (Կարմիր) մզկիթը կառուցուած է 1276 թուականին, մեմլուքներու սուլթան Ալ Տահէր Պէյլապի կողմէ (1223-1277): Պատմաբաններու եւ այլոց կարծիքով, սոցն կառուցը ճարտարապետական մասնաշատուկ արժեւորում մը չի ներկայացներ: The Golf News թերթին համաձայն նոյնպիսի ճակատագրի արժանացած են նաեւ այլ պատմական մզկիթներ, գերեզմանատուներ եւ

### ՍԴՀԿ Մոնթրէալի Վարիչ Մարմինի Նուիրատուութեամբ Նպաստի Հերթական Բաշխում Լիբանանահայ Կարիքաւոր Ընտանիքներու



ՍԴՀԿ Մոնթրէալի Վարիչ Մարմինի նուիրատուութեամբ Շաբաթ, 18 Յուլիս 2020-ին, տեղի ունեցաւ հերթական նպաստաբաշխումը Լիբանանահայ կարիքաւոր ընտանիքներու: Ուտեստեղէնի շուրջ 100 անտուկներ բաժնուեցան ձեռամբ ՀՄՄ-ի սկաւառներու եւ արենուշներու: Շաբաթ առաւօտեան ժամերէն, ՀՄՄ-ի արիւնքը, սընտուկները բեռնակառքի մէջ զետեղած, այցելեցին ընտանիքներուն, անձամբ բաժնելով զանոնք եւ մասամբ թեթեւցնելով այդ ընտանիքներուն բեռը:

Այս առթիւ, շնորհակալական խօսք կ'ուղղենք ՍԴՀԿ Մոնթրէալի Վարիչ Մարմինին, որ հեռաւոր Գանատային չմոռցան Լիբանան ապրող իրենց ազգակիցները եւ օգնութեան ձեռք մեկնեցին անոնց: ՀԿԲՄ-ի վարչութիւնը եւ ՍԴՀԿ Ընկերային Ծառայութեան դիւանը կը շարունակեն եւ պիտի շարունակեն ըն կերային եւ մարդասիրական ծառայութիւնները տրամադրել, այնքան ատեն որ տակաւին Լիբանան կը գտնուի տնտեսական անկայուն վիճակի մէջ եւ բազմահազար հայորդիներ գործազուրկ են:

կրօնական տարբեր կառույցներ: Անոնցմէ ոմանք կամ գիշերային պարասրահներու վերածուած են եւ կամ պայթեցուած: Ոմանք կը կարծեն թէ Իսրա-

յէլ հոգեբանական դետին եւ հանրային կարծիք կը նախապատրաստէ վերագրաւելու Երուսաղէմի իսլամական մեծագոյն սրբավայրերէն «Ալ Աքսա» մզկիթը:

# VA Print Media

Book Printing & Binding • Hard Covers  
College Dissertations • Year Books  
Restoration of Old Books & Bibles  
Newspaper Archiving

**Vahe Atchabahian**  
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
Tel: 626-793-6220  
Cell: 626-354-5924  
vamedia@yahoo.com  
www.vaprintmedia.com



# Massis Weekly

Volume 40, No. 28

Saturday, JULY 25, 2020

## Armenia Demonstrates \$150 Million Worth Azeri Drones Shot Down in Border Clashes



YEREVAN—Armenia's Defense Ministry demonstrated on Tuesday Israeli-made military drones of Azerbaijan shot down by its anti-aircraft units in last week's heavy fighting on the Armenian-Azerbaijani border.

The Armenian military have destroyed or intercepted 13 such unmanned aerial vehicles (UAVs) during the clashes that broke out on July 12 and largely stopped five days later. It says that 10 of them were attack drones that were about to strike Armenian military and civilian targets in the northern Tavush province bordering the Tovuz district in western Azerbaijan.

Fragments of some of those UAVs were put on display at the Defense Ministry's Military Aviation Institute in Yerevan. Ministry officials also showed journalists a largely intact ThunderB surveillance drone manufactured by Israel's BlueBird

Aero Systems company.

The Armenian military publicized on July 14 what it described as amateur footage of a sophisticated Hermes 900 drone of the Azerbaijani armed forces destroyed by an Armenian surface-to-air rocket. Hermes 900 is produced by another Israeli company, Elbit Systems, and used for reconnaissance and communication relay. The Azerbaijani military has denied losing such aircraft.

An Armenian defense news website posted at the weekend a photograph of two Armenian soldiers holding a SkyStriker "suicide" drone also manufactured by Elbit Systems. Israeli media revealed the sale of such UAVs to Azerbaijan in January 2019.

The Azerbaijani army used other types of Israeli-made "suicide" drones during the April 2016 hostilities in

Continued on page 3

## House Adopts Amendment Closing Loophole on U.S. Funding Azeri Military

WASHINGTON, DC -- On July 20, the U.S. House of Representatives, adopted a key amendment by Representative Frank Pallone Jr. (D-NJ) during consideration of H.R. 6395: William M. (Mac) Thornberry National Defense Authorization Act (NDAA) for Fiscal Year 2021 for military activities of the Department of Defense reported the Armenian Council of America.

Rep. Pallone's amendment, which was co-sponsored by Reps. Zoe Lofgren (D-CA), Adam Schiff (D-CA), Brad Sherman (D-CA) and Jackie Speier (D-CA), requires a report from the Secretary of Defense, in collaboration with the Secretary of State, addressing allegations that some units of foreign countries that have participated in security cooperation programs under section 333 of title 10, U.S.C. may have also committed gross violations of internationally recognized human rights before or while receiving U.S. security assistance. This report would also include recommen-


dations to improve human rights training and additional measures that can be adopted to prevent these types of violations.

"We appreciate Armenian Caucus Chairman Rep. Frank Pallone for his efforts to successfully lead this amendment in this year's NDAA. While this amendment is a step in the right direction, there is much more we can do to stop American tax dollars from going to corrupt countries like Azerbaijan," stated ACA Washington D.C. Representative Taniel Koushakjian.

Representative Pallone's amendment was among three amendments of significant interest to Armenian-Americans. Amendments by Representative Brad Sherman (D-CA), prohibiting funds from being used to transfer defense articles or services to Azerbaijan and Representative Jackie Speier, restoring the long-standing policy of parity in military funding between Azerbaijan and Armenia, were not made in order by the Rules Committee on July 17th.

## SDHP Central Committee Announcement

Over the past five days, the continued aggression of the Azerbaijani forces toward the direction of Armenia's Tavush region and the bombing of peaceful villages in the region once again prove that the dictatorial regime of Azerbaijan will not give up on its reprehensible intent to seek military resolution of the Artzakh conflict, thus continuing to be the main obstacle toward a peaceful settlement. We also condemn Turkey's blatantly unilateral stance in the current situation, which can only contribute to the further destabilization of the region.



Recent events have reaffirmed the fact that the brave and capable Armenian army is not only ready to defend the country's borders, but improve its combat positions with precise actions. We hope that the Azerbaijani regime that had the false illusions of military supremacy and for many years made belligerent declarations and threats of war against Armenia and Artzakh, draws the right conclusions in the light of the latest developments and returns to the negotiating table.

These days, more than ever, we value the importance of unity and cohesiveness in our quest to confront not only the visible but also the invisible enemy that continues to pose the greatest threat to the well-being and future of our homeland. Consequently, we once again urge our compatriots living in Armenia and Artsakh, to follow the guidelines in the fight against the Coronavirus epidemic, with the "mighty front line, mighty rear" principle in mind.

Long live the Armenian army!

Salute to the fallen soldiers!

Social Democrat Hunchakian Party Central Committee

July 17, 2020

## Hundreds Protest in Front of Azerbaijani Consulate in Los Angeles



LOS ANGELES — On Monday morning, July 20, hundreds gathered at the Azerbaijani Consulate in Los Angeles to protest the Azeri-Turkish aggression against Armenia and the civilian population in the Dvovush region.

Due to the pandemic, the gathering was planned to be symbolic, but the attendance was larger than expected and about 500 people, carrying Armenian flags and anti-war posters, showed up in front of the consulate on Wilshire Blvd., in West Los Angeles.

The event was organized by a group of community activists who

condemned the recent military activities on the Armenian border regions, calling upon countries who are supplying arms to Azerbaijan to stop supporting the aggressor.

The speakers expressed solidarity with the brave soldiers of the Armenian Armed forces, the people of Armenia, and the leadership of the country.

The rally, which lasted more than two hours, was held in a festive mood, with national and patriotic songs and Armenian folk dances.

In contrast to other cities, there was no Azeri presence or attempts to disrupt the event.



## Threatening Metsamor Nuclear Power Plant is a Crime Against Humanity

On July 12th, the fragile ceasefire along the Armenian and Azerbaijan border was shattered by the unprovoked and armed incursion into the Republic of Armenia's Tavush Province by the Azeri military.

Once again, the world takes note of the cycle of violence Azerbaijan perpetuates in its decades-long quest to destroy the Republics of Armenia and Artsakh. Azerbaijan, fueled by the hateful and intolerant rhetoric and policies of its dictator Ilham Aliyev, has begun to redouble its efforts in this endeavor.

Further escalating the tension, Azerbaijan threatened to launch missile attacks on Armenia's Metsamor Nuclear Power plant in gross manifestation of crimes against humanity.

The world cannot sit idly by and watch as Azerbaijan spews the hateful and intolerant speech of Genocide, all while committing violent acts of aggression against Armenia.

We denounce the Azerbaijani government and stand in solidarity with the Armenian and Artsakh governments, military and people, as they struggle to protect their property, sovereignty and livelihood. We pledge our support in this cause.

The Azerbaijani government is in violation of the Geneva Convention, specifically Articles 51 and 54 which outlaws indiscriminate attacks on civilian populations and civilian (non-military) targets, and Articles 56 and 53 outlaw attacks on dams, dikes, nuclear-generating stations, and places of worship. We call on the international community and all freedom loving nations, to apply necessary measures to halt the Azeri campaign of aggression and put an end to this violence once and for all.

Social Democrat Hunchakian Party  
Armenian Council of America  
Gaidz Youth Organization  
Armenian Educational Benevolent Union  
Nor Serout Cultural Association  
Armenian Athletic Association

## Artsakh Air Defense Units Shoot Down Azerbaijani Orbiter-3 Drone



STEPANAKERT — Air defense units of the NKR Army have shot down an Azerbaijani "ORBITER-3" UAV on a surveillance mission in the north-eastern direction of Artsakh on July 18.

A statement by the press service of Artsakh's Defense Ministry states that, "the front line units of the Defense Army continue keeping full control of the situation and confidently carry out protection of the borders of

the country."

"All moves by Azerbaijani forces are under full control. There is some activity of drone operation mainly in the air space of Azerbaijan. The only incident of violation of Artsakh air space was recorded in the morning and resulted in destroying the Azerbaijani drone," Tigran Abrahamyan, former advisor to Artsakh's president wrote on Facebook.

